

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՇԵՂՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻՇԵԻ ԵՎ ՓԱՐՊԵՑՈՒ ՀԱԿԸՆԴԴԵՄ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ

*Ի սրտե նվիրում եմ գրականության
նվիրյալ և հայազգային գաղափարաբանության
ներհուն մեկնաբան ակադեմիկոս Սերգեյ Սարիյանին ծննդյան
90-ամյակի առթիվ՝ արևշատության անկեղծ
մաղթանքներով:*

Ազաթանգեղոսի Պատմության և Կորյունի «Վարք Մաշտոցի»-ի բնագրական փոխառնչության հարցին զուգահեռ, ավելի քան մեկ դար է, ինչ շարունակվում է «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» մատյանի և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ի առաջնության շուրջ բանասերների և պատմաբանների մեջ ծավալված բանավեճը: Վերջին մի ուսումնասիրության մեջ ես բացահայտեցի, որ «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» պատմության հեղինակը ոչ թե 449/50 թվականի Արտաշատի ժողովի մասնակից *Եղիշա՝ կամ Տէր Եղիշէ՝ Ամատունեաց եպիսկոպոսն* է, այլ 444/5 թվի Շահապիվանի եկեղեցական ժողովի մասնակից և քարտուղար՝ *դրան* (արքունի) *երէց Եղիշէն*, նույն ինքը *Եղիշե Սոկացին*, որն այդ շրջանում ատենադպիր էր մարզպան Վասակ Սյունու գրասենյակում: Ի միջի այլոց, Մեսրոպ Մաշտոցը Արշակունյաց արքունիքում (Առավան հազարապետի օրոք) ատենադպիր եղած ժամանակ նույնպես երեցի հոգևոր աստիճան ուներ՝ «Որ էառ զծեռնադրութիւն երիցութեան ի նմին Սահակայ կաթողիկոսէ»³:

¹ Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե.Տէր-Սիմասեան, Երևան, 1957, էջ 28 (այսուհետ՝ Եղիշէ):

² Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան. Աշխատութեամբ Գ.Տէր-Մկրտչեան եւ Ստ.Մալխասեանց, Տփղիս, 1904, դրոագ Բ, գլ. ԻԳ, էջ 45 (այսուհետ՝ Փարպ.):

³ Ն.Աղոնց, Երկեր, հրատ. Պետրոս Հովհաննիսյանի, Խ.Բ., 2006, էջ 189:

Հայ ազգային մատենագրական դարավոր ավանդույթը միանգամայն հավաստի է ճանաչում Վարդանանց պատմիչ Եղիշեի վկայությունները՝ դեպքերին ականատես լինելու վերաբերյալ: Քանի որ նրա Պատմությունն ավարտվում է Հագկերտ Բ-ին հաջորդած Պարսից Պերոզ թագավորի 5-րդ տարվա դեպքերով, ըստ այսմ էլ ընդունված է, որ Եղիշեի Վարդանանց պատմությունը գրված է մոտ 462-465 թթ.:

Հ.Գաթրոճյանի կարծիքով Եղիշեի Վարդանանց պատմությունը «պետք է գրված լինի 470-ին կամ քիչ ետքը», քանի որ Աբրահամ Խոստովանողի վախճանը տեղի է ունեցել աքսորված նախարարների դարձից տարիներ անց, իսկ վերջինիս համառոտագրությունից օգտվել է Եղիշեն:

Ա.Գարագաշյանը անվերապահ Եղիշեի Պատմությունը համարում է V դարի երկրորդ կեսի *ոչ դոյզն մատենագրի* գործ՝ «Ստոյգ է սակայն, որ Պատմութիւնն յանուն Եղիշէի է ոչ դոյզն մատենագրի երկրորդ կիսոյն Ե. դարու: Լեզուն ազատ ի հելլենաբանութենէ, չունի թարգմանչաց լեզուի նկարագիրը»¹:

Անշուշտ իրավացի է Հրաչյա Աճառյանը, երբ մերժում է Ստ.Մալխասյանցի առաջ քաշած դասակարգման նոր եղանակը, ըստ որի Եղիշեն Վարդանանց պատմությունը գրել է Ագաթանգեղոսի Պատմությունից առաջ, քանի որ Վարդանանց պատմիչը չգիտե և ոչ մի անգամ չի հիշատակում Գրիգոր Լուսավորչին²: V դ. հեղինակների ժամանակագրական դասակարգման համար մեծանուն լեզվաբանը հիմք է ընդունում ոչ թե Գրիգոր Լուսավորչի անվան հիշատակումը, այլ նախկինում ընդունված դասական եղանակը՝ հենված Ոսկեդարյան գրաբարի լեզվաոճական ուրույն հատկանիշների վրա (բառազանձ, քերականական բուն հայկական համակարգ և այլն): Դեռ 1945 թվին, պատասխանելով Մալխասյանցին, նա մատնանշում էր. «Ենթադրենք, թե մենք այժմ խախտում ենք 460 թվի սահմանը և տանում ենք ավելի առաջ, օրինակ, մինչև 475թ. – այս դեպքում Աբգարը³, Ագաթանգեղոսը և Փավստոսը կմնան Ոսկեդարի (նոր) սահմանում, բայց ի՞նչ կանենք Եղիշեն: Իր լեզվով Եղիշեն Ագաթանգեղոսից, Աբգարից ու Փավստոսից *անպատճառ* հետո է, ուր մնաց թե նրանց ժամանակակից և նույնիսկ ավելի առաջ»⁴:

Ղազար Փարպեցին (ծնվ.մոտ 440- 443 թթ.) V դ. միակ երջանիկ հե-

¹ Ա.Մ.Գարագաշեան, Քննական պատմութիւն Հայոց, ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց, մասն Ա, Թիֆլիս, 1895, էջ 106:

² Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Ա.Մուշեղյան, Գրիգոր Լուսավորչի անվան և պաշտամունքի խորհրդապաշտական արգելքը 430-ական թթ. ասորի կաթողիկոսների օրոք – Բանբեր Մատենադարանի, N 19, Երևան – 2012, էջ 21-44:

³ Նկատի ունի Թադեոս առաքյալի Վկայաբանությունը:

⁴ Հր.Աճառյան, Հայկականը Ա. Մեր առաջին պատմագրերի թվականը – «Տեղեկագիր Հայկ. ՍՄՀ ԳԱ» (հասարակական գիտությունների), 1945, N 3-4, էջ 47-50: Տե՛ս Հր. Աճառյան, Բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 1976, էջ 204:

դիմակն է, որը ետ ու առաջ չի տեղաշարժվել իր ապրած ժամանակից, ուստիև նրա «Պատմութիւն Հայոց»-ը, որի ամբողջ Բ դրվագը (իմա՝ գիրքը) և Գ դրվագի առաջին չորս գլուխները նվիրված են Վարդանանց ապստամբությանը և նախարարների աքսորին, ինչպես Եղիշեի Մատնանը, միահամուռ ընդունված է բոլոր ուսումնասիրողների կողմից իբրև V դ. վերջի կամ VI դ. սկզբի գրվածք: Այսպես էլ ավանդաբար լուծվել է երկու պատմիչների փոխառնչության հարցը և նրանց պատմական երկերի տեղը V դարի հայ մատենագրության դասակարգման շղթայում: Այստեղից հետևում է, որ Փարպեցին պետք է լիովին օգտված լիներ Եղիշեի Պատմությունից: Միաժամանակ հարկ է ընդունել, որ Ղազարը լրացուցիչ տեղեկություններ է քաղել նաև Ավարայրի պատերազմում ողջ մնացած և պարսկական աքսորից վերադարձած նախարարներից, հատկապես՝ Արշավիր Կամսարականից:

Հակառակ սրան, ձգտելով լույս սփռել Եղիշեի անձին և ինքնությամբ, ոչ միայն հաջորդ պատմիչները, այլև հետագա ուսումնասիրողները միայն հեռացել են հարցի քննությունից իրենց հեռում միտող ենթադրություններով, որոնք հաճախ զուրկ են որևէ հիմքից:

XIX և XX դարերի հայ և օտարազգի հետազոտողների միջև բորբոքվեց մի սուր բանավեճ, թե Հայոց ապստամբությունը և Ավարայրի ճակատամարտը պատկերող երկու հեղինակներից ով է առաջինը՝ Ղազարն է օգտվել Եղիշեից, թե՞ հակառակը: Մի շարք բանասերներ (Գրիգոր Տեր-Պողոսյան, Բաբկեն Կյուլեսերյան, Աբրահամ Զամինյան, Ներսես Ալիևյան, ընդհուպ մինչև Ռոբերտ Վ. Թոմսոն և Փիթեր Քաուփ) իրենց երկարաշունչ ուսումնասիրություններում ջանում են ապացուցել, որ Ավարայրի էպոպեայի նախընծա պատմիչը մարզպան Վահան Մամիկոնյանի սննդակից Ղազար Փարպեցին է, որը մանկությունից վերահասու է եղել Հայոց ապստամբության մանրամասներին, ինչպես և Մամիկոնյան տոհմի հետ կապված գրույցներին: Այս պատճառով էլ Փարպեցու հետ ունեցած թե՛ նույնություններում և թե՛ հակասություններում միշտ մեղադրվող է ճանաչվում Եղիշեն: Առաջ տանելով այս տեսակետը՝ այդ հետազոտողները Եղիշեին և նրա պատմական երկը տեղադրում են Փարպեցուն հաջորդած հարյուրամյա ժամանակահատվածում՝ VI դ. 1-ին կեսից մինչև VII դ. 1-ին կեսը: Ուստի անխուսափելիորեն պետք է հանգեին այն հետևության, թե իբր կեղծ են Եղիշեի հավաստիացումները, որ ինքը ակնմատես է եղել իր պատմած դեպքերին: Ցավոք սրտի, ընդհանրախոսությունը գրաքննադատության անբաժան ուղեկիցն է և հատուկ ընդունակություն ունի նույնիսկ այլ հեղինակներին ու հաջորդ ժամանակներին փոխանցվելու:

Հատկապես ուշագրավ է (բառիս բացասական առումով) Ն.Ալիևյանի բերած ավանդը, որի մի շարք հրապարակումներում Եղիշե պատմի-

չին ու նրա երկը նսեմացնելու մարմաջը հասնում է խեղաբանության: Ըստ Ակինյանի, գոյություն է ունեցել(միայն իրեն հայտնի) մի պատմություն՝ 572 թ. մի ուրիշ Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդան) ապստամբության մասին ընդդեմ Պարսից, որին հաջորդել է իրանաբյուզանդական 20-ամյա պատերազմը: Այնուհետև, Ակինյանի ենթադրությամբ՝ VII դ. Եղիշե անունով մի զեղծարար, Փարպեցու «Հայոց պատմության» Բ դրվագի հիման վրա, խմբագրել է Կարմիր Վարդանի մասին հիշյալ պատմությունը և հարմարեցրել 451 թ. Վարդան Մամիկոնյանի ապստամբությանը: Այնպես որ, Եղիշեի պատկերած Հազկերտ Բ արքայից արքան իրականում մեկ դար հետո գործած «Խոսրով Ա Անուշավանը կրնա ըլլալ» (531-579)՝ Բյուզանդիայի և քուշանների դեմ կատարած իր արշավանքով: Այս հիրավի խեղաբանությունն Ակինյանը նախանձելի համառությամբ կրկնում է տասնամյակներ շարունակ՝ «Հանդէս ամսօրեայ»-ում հրապարակած իր երկարաբան ուսումնասիրություններում¹:

Սեբեոսը առաջին հեղինակն է, որ հիշատակում է 451 թ. և 572 թ. երկու «Վարդան Մամիկոնյան»-ներին, բայց հակառակ Ակինյանի, որը թյուրիմացաբար *Կարմիր Վարդան* է անվանում երկրորդ Վարդան Մամիկոնյանին՝ Վասակի որդուն, անհամեմատ ավելի իրազեկ պատմիչը *Կարմիր Վարդան* է կոչում միայն Ավարայրի ճակատամարտում Հայոց զորքի սպարապետին. «Արդ՝ զԺամանակս թագաւորութեանն չարագործին Յազկերտի. և եթէ ո՛րպէս նա կամէր զաստուածայինն եղծանել կարգս, և կամ ո՛րպէս քաջ նախարարացն Հայոց և նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամիկոնէից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան, հանդերձ միագունդ սպառազէն նիզակակից ընկերաւքն և զաւրաւք իւրեանց կազմեալ զինեցան ի պատերազմ, առեալ ի ձեռն զվահանն հաւատոյ, և զգեցեալ իբրև զզրահ ամրութեան զնախանձն աստուածային բանին, գոգցես թէ առաջի աչաց իսկ ականատես դէմ յանդիման տեսանելով զ՝ ի վերուստ առաքեալ նոցա զպսակն. Վասն որոյ արհամարհեալ զմահ, և առաւել լաւ համարեալ մեռանել ի վերայ աստուածային պողոտային. և թէ որպէս ի վերայ նոցա եկին զաւրքն պարսիկ սաստիկ բռնութեամբ, և կամ ո՛րպէս ի դիմի հարեալ զիւրեանց կատարեցին զնահատակութիւն, և կամ որպէս ի ձեռս հեթանոսաց ըմբռնեալ սուրբ վկայքն Քրիստոսի՝ կատարեցին զնահատակութիւնս իւրեանց յԱպր Շահր մերձ ի Նիւշապուռ քաղաքի, ի տեղուջն, որ կոչի Թէարքունի – այն

¹ Ն.Ակինեան, «Եղիշէ վարդապետ եւ իր Պատմութիւնն Հայոց Պատերազմին». Զննական ուսումնասիրութիւն, հտ. Ա, Վիեննա, 1932 (Մաշտոցի Մատենադարան, թիվ 133) և հտ. Բ, Վիեննա, 1937 (Մաշտոցի Մատենադարան, թիվ 140):

ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն»¹: Իսկ որ այստեղ Սեբեոսը նկատի ունի հենց Եղիշէին և նրա Վարդանանց պատմությունը, ցույց է տալիս ոչ միայն «գոգցես թէ առաջի աչաց իսկ ականատես դէմ յանդիման տեսանելով զ՝ ի վերուստ առաքեալ նոցա զպսակն» արտահայտությունը (նույնպես Վարդան Մամիկոնյանի և նրա զինակիցների մասին)², այլև *Թէարքունի* տեղանունը, որով Սեբեոսը հայերեն թարգմանությամբ ակնարկում է Եղիշէի Պատմության մեջ մի անգամ գործածված *դարի թիր* տեղանունը³ (*դար* = արքունի և *թիր*՝ հմմտ. Տիր) – այսպես էր կոչվում Սուրբ Ղևոնդյանց նահատակության վայրից՝ Ապր Ծահր գավառի Նյուշապուհ քաղաքից ոչ հեռու գտնվող մոզերի հրո տաճարը, որ հետազոտողներից ոմանք ուղղում են Դար-ի-Սիհր⁴ (Սիհրի դուռ): Սրբերի սարսափելի խոշտանգման և նահատակության պատճառով այնպիսի գետնաշարժ եղավ, որից զարհուրած պարսիկ ավագ խորհրդականներ Ջնիկան մարզպետին և Սովան անդերծապետին մոզպետը հրավիրում է վաղը առավոտյան գալ Դարի-թիր՝ մտքերը հանդարտեցնելու, որովհետև այնտեղ վաղը Մովպետան մովպետը մեծ զոհ է մատուցանելու. «Եւ եթէ զարհուրեցայք ինչ յոգիս ձեր, վաղագոյն առաւօտուցն ի *դարի թիր* եկայք. զի վաղիւ անդ Մովպետան մովպետ ռատ յազէ, և նոյն հաճեալ հաւանեցուցէ զմիտս ձեր»⁵:

Պրոֆեսոր Ռ.Վ.Թոմսոնը Եղիշէի և Փարպեցու առնչության հարցին անորոշարձել է նրանց պատմական երկերի անգլերեն թարգմանության ներածություններում (1982 և 1991 թվերին): Դեպքերին ականատես լինելու մասին Եղիշէի վկայությունները համեմատելով Փարպեցու այն պնդումների հետ, թե վերջինս Վարդանանց ապստամբության մասին տեղեկությունները քաղել է վերապրած մասնակիցներից՝ անգլիացի պրոֆեսորը մատնանշում է. «Հիմքեր կան Եղիշէի երկը տեղադրելու ավելի ուշ, քան 5-րդ դարը»⁶: Սի այլ անգամ Թոմսոնն ավելի որոշակի

¹ Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ.Վ.Աբգարյանի, Երևան, 1979, գլ.է, էջ 65:

² Սեբեոսը նկատի ունի Եղիշէի մոտ այն դրվագը, երբ քրիստոնեություն ընդունած նորադարձ Պարսից մոզպետը գիշերային երկնքում տեսնում է, թե ինչպես Վարդանը, Խորենը և Արտակը վերևից ինը պսակ են բերում կապեալ հայ եպիսկոպոսների և իր՝մոզպետի համար (Եղիշէ, էջ 150):

³ Եղիշէ, էջ 181:

⁴ Հր.Աճառյան, Արմատական բառարան, հ. 1, էջ 637-638:

⁵ Եղիշէ, էջ 181:

⁶ Robert W. Thomson. Introduction to Elishe. History of Vardan and the Armenian War. Cambridge, Massachusetts (USA), 1982. Նույնի՝ Introduction to The history of Lazar P'arpec'i, Atlanta, Georgia, Scholars Press, 1991, p.12: Միանգամայն անհասկանալի է նաև, երբ Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ը, որը միջնադարյան բոլոր ձեռագրերում ունի սույն վերնագիրը, իր անգլերեն թարգմանության մեջ Թոմսոնն անվանում է սոսկ «The history of Lazar P'arpec'i» - «Ղազար Փարպեցու պատմություն»:

նշում է, որ Եղիշեի երկը շարադրված է Փարպեցուց ավելի քան մեկ դար հետո. «Ղազարի պատմությունը որևէ անմիջական արձագանք չի ունեցել հայ մատենագրության մեջ: Այն ավելի քան մեկ դար վաղ է գրված, քան մի այլ պատմիչ կանդրադառնար այդ թեմային»¹:

Թմսոնը իրագել է նաև, որ VII դ. երկրորդ կեսին գրված Սեբեոսի Պատմության նախաբանում ակնարկներ կան Վարդան Մամիկոնյանի ապստամբության և Վարդանի դերի մասին, որոնց հիմքը Եղիշեի Պատմությունն է²: Բայց այսպես նշելով՝ անգլիացի հայագետը ինքն իրեն հարց չի տվել, թե ինչպե՞ս կարող էր Սեբեոսը Փարպեցու սկզբնաղբյուրի փոխարեն հիշատակել նրանից 100 տարի հետո քաղաքացիական աղբյուրը:

Նման հետևությունները, Եղիշեի և Փարպեցու համեմատական բնութագրերի մասին, պերճախոս վկայությունն են այն բանի, թե որքան խաբուսիկ կարող են լինել հետազոտողների եզրահանգումները, եթե դրանք կառուցված են ուրիշներից փոխառած և իրենց կանխակալ համոզմունքներին հարմարեցված կարծիքների վրա:

Անկողմնակալ, մանրախույզ ուսումնասիրությունը բացահայտում է Եղիշեի առաջնությունը Փարպեցու նկատմամբ ոչ միայն ժամանակի առումով, այլև նրանց բովանդակության մեջ տեղ գտած շատ էական տարբերություններով, որոնք փաստում են Փարպեցու Պատմության կախումը Եղիշեի բնագրից: Այսպես, վերապատմելով Եղիշեի Վարդանանց պատմության հիմնական դրվագները՝ Փարպեցին ջանում է իր նախորդի գործածած բառուբանը փոխարինել հոմանիշ արտահայտություններով կամ փոփոխել՝ ըստ իր ունեցած տեղեկության: Նույնիսկ աշխարհագրական տեղանունները հնարավորինս փոխարինում է զուգահեռ անվանումներով: Օրինակ, Եղիշեն հաղորդում է, թե Վասակ Սյունի մարզպանը Վրաց և Աղվանից աշխարհների օրինակով Աղձնյաց երկիրն էլ ետ պահեց հայերի հետ միաբանվելուց և նույն նպատակով հրովարտակ գրեց Յունաց երկիրը՝ Ստորին Հայքի սպարապետ Վասակ Մամիկոնյանին, որ հավատարիմ ծառայում էր հռոմեների զորքին Պարսից սահմանի վրա. «քակեաց (Վասակ) և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն Աղձնեաց ըստ մմին իսկ օրինակի յետս կալաւ: Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոյ ստութեամբ, առ այդ մի, որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնենից՝ որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց, և հա-

¹ R. W. Thomson. Elishe, p. 30. The history of Lazar P'arpec'i, p. 18.

² Նույն տեղում:

ատարիմ զօրացն Հռոմոնց ի սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք»¹:

Իր Հայոց պատմության մեջ Եղիշեից քաղած դրվագում Ղազար Փարպեցին Ստորին Հայք անվան փոխարեն պարզապես թվարկում է այդ նահանգի մեջ մտնող և դրան հարևան գավառները՝ Աղձնիք, Անգեղտուն, Ծոփք, Հաշտյանք, Եկեղյաց. «Եւ (իշխանն Սինեաց Վասակ) վաղվաղակի նամականի արարեալ առ կայսր և առ ամենայն աագանի դրանն Յունաց և առ այլ իշխանս և կողմնակալս, առ բոլշխն Աղձնեաց և առ իշխանն Անգեղ տան, ի Ծոփս և ի Հաշտեանս և յԵկեղեաց և այլ իշխանաց իւրաքանչիւր տեղեաց, և առ մեծ սպարապետն Անտիոքայ»²:

Ստորին Հայքի տակ Նիկողայոս Ադոնցը ենթադրում է հայկական ինքնավար սատրապությունները (Հռոմեական տիրապետության տակ անցած հարավ-արևմտյան Հայաստանում), և սակայն Փարպեցու մոտ չգտնելով համապատասխան հատվածը՝ Եղիշեի հաղորդած տեղեկությունը համարում է մեկն այն հետսամուտ մակաշերտերից, որոնք չեն խոսում Եղիշեի օգտին՝ իբրև V դարի պատմիչի³: «Հայտնի է, որ ոչ սատրապություններում և ոչ էլ Ներքին Հայքում կայսրերը զորք չէին պահում, - շարունակում է Ն.Ադոնցը, - և սահմանների, ինչպես նաև երկրի պաշտպանության գործը դրված էր տեղական ուժերի վրա մինչև 529 թ., երբ Հուստինիանոսն առաջին անգամ նշանակեց Հայաստանի ստրատեգ և նրան ենթակա երեք դուքս: Քանի որ պատմիչը խոսում է Հայաստանում հռոմեական զորքերի սպարապետի մասին, ում էլ հասկանալու լինենք նրա տակ՝ ստրատեգին թե դուքսերից մեկին, այնուամենայնիվ, նրա գիրքը չի կարող գրված լինել 529 թվականից առաջ»: Երիտասարդ Ն.Ադոնցի հաղորդած պատմական ճիշտ տեղեկությունը, թե արևելահռոմեական կայսրերը հայկական սատրապություններին էին վստահում տեղական ուժերով Պարսից սահմանը պահպանելու գործը, միանգամայն սխալ է մեկնաբանված նրա կողմից Եղիշեի Պատմության տվյալ կոնտեքստում: Բանն այն է, որ Պատմիչի խոսքը՝ «այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց, և հաատարիմ զօրացն Հռոմոնց ի սահմանին Պարսից»⁴ հենց ամենավիճելի տեղում սխալ է թարգմանված Ն.Ադոնցի ռուսերեն աշխատության մեջ՝ «По Елисею, Васак Мамиконид, сторонник марзбана, состоял в то время, то есть в 451 г., спарапетом Нижней Армении и ему были вверены римские (ромейские - А.М.) войска на

¹ Եղիշե, էջ 93:

² Փարպ., էջ 63:

³ Н.Адонц, Армения в эпоху Юстиниана, С.-Петербург, 1908, с. 126, примеч. 1.

⁴ Եղիշե, էջ 93:

границе Персии»¹: «Հաւատարիմ զօրացն Հռոմոնց» չի նշանակում ամենևին «նրան էին վստահված (ему были вверены) Հռոմոնց զորքերը», այլ այն, որ սպարապետ Վասակ Մամիկոնյանը հավատարմությամբ էր ծառայում Հռոմոնց զորքին Պարսից սահմանի վրա՝ «Он с верностью служил ромейским войскам на границе Персии» (Ա. Մ), այսինքն՝ Հռոմոնց զորավարները նրան էին վստահել Պարսից սահմանի պահպանությունը, և այս սխալ թարգմանության պատճառով բոլորովին կարիք չկար ավելի մեծ սխալ հետևության հանգել՝ Եղիշեին և նրա Պատմությունը 529 թվականից այս կողմ տեղափոխելով:

Բնավ ընդունելի չեն Եղիշեին իր ժամանակից տեղաշարժելու Ն.Ադոնցի այս և մյուս փաստարկները, հատկապես երբ նա դիտել է տալիս, թե Վասակ Մամիկոնյանի անձի մեջ թաքնված է 536 թ. Հուստինիանոսի դեմ ապստամբած հայ իշխանների պարագլուխ ոմն Վասակի հիշատակը, որի մասին պատմում է Պրոկոպիոսը²: Ի՞նչ նմանություն կարող է լինել VI դ. հռոմեական կայսր Հուստինիանոսի դեմ ապստամբած ըմբոստ իշխանի և V դ. կեսերին հռոմեներին հավատարիմ ծառայող համանուն մեկի միջև, ում Եղիշեն խիստ հակակրանքով ներքին Վասակ է անվանում, որը «արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք»³: Իսկ Ն. Ադոնցի այն դիտողությունը, թե Ղազար Փարպեցին չգիտե Ստորին Հայքի սպարապետ Վասակ Մամիկոնյանին նույնպես ունի իր բացատրությունը: Եղիշեից տվյալ դրվագը քաղելով՝ շրջահայաց պատմիչը պարզապես զանց է առել Վարդան Մամիկոնյանի հակառակորդ Սյունյաց իշխանի հետ գործակցող Վասակ Մամիկոնյանի անունը, չցանկանալով իր մեկենաս Վահան Մամիկոնյանին ի ցույց դնել նրա նշանավոր տոհմակցի արատավոր վարքը, մինչդեռ անկասելի Եղիշեն ցուցադրում է դա՝ առանց քաշվելու իր պատվիրատու Մամիկոնյան Դավիթ երեցից⁴:

IV դարի վերջին Մեծ Հայքի բաժանումից հետո (387թ.) Հունաց բաժնում՝ Ծոփաց աշխարհի (այլ կերպ՝ Ստորին Հայքի) սատրապն էր Կամսարական տոհմից Գազավոն ստրատելատը⁵, որին և ուղղված է Թեոդոս Մեծ կայսեր էդիկտը՝ *Gaddanae satrapae Sophanena*⁶: Մեծ Հայքի Պարսից բաժնում թագավոր նշանակված Խոսրով Գ-ի խոստումներից հրա-

¹ Н.Адонц, с.126, примеч. 1.

² Н.Адонц, с. 125.

³ Եղիշե, էջ 93:

⁴ Ա.Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևանի Պետական համալսարանի հրատ., 2007, էջ 119-120:

⁵ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ՝ Մ.Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 (այսուհետ՝ Խոր.), Գ, ԽԸ-ԽԹ, էջ 317-319:

⁶ Գազավոն և *Gaddanas* անունների և անձերի նույնացման մասին տե՛ս Ա.Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 326:

պուրվելով՝ Գազավոնը 387 թվին այլ նախարարների հետ փոխադրվեց Հայաստանի արևելյան մասը, որից հետո, պետք է ենթադրել, Ծոփաց աշխարհի ստրատելատ-սպարապետի պաշտոնը և գորավարությունը ժառանգաբար անցնում է Սամվել Մամիկոնյանին, որն Արշակ թագավորի մտերիմն էր և իր գնդով հետապնդում էր Արշակի գանձերը հափշտակած Խոսրովի նախարարներին¹: Նա ուրացության համար սպանել էր իր հորը՝ Վահան Մամիկոնյանին և մորը՝ Տաճատուհուն, ուստի և մնաց Հունաց կայսր Արկադիոսի մոտ²: Սրանով պետք է բացատրել, որ V դարի կեսին Ստորին Հայքում (այն է՝ Մեծ Ծոփքում) սպարապետի պաշտոնում տեսնում ենք նույն տոհմից Վասակ Մամիկոնյանին, որը հավանորեն Սամվել Մամիկոնյանի որդին էր, և Վասակ է կոչվել ի հիշատակ Սամվելի հորեղբոր՝ անձնուրաց սպարապետ Վասակ Մամիկոնյանի, որին Պարսից թագավոր Ծապուհ Բ-ն խաբեությամբ Հայոց Արշակ թագավորի հետ Տիգրան էր հրավիրել և մորթազերծ անելով՝ պաճուճապատանը դրել Անհուշ բերդում շղթաված Արշակ թագավորի աչքի առաջ:

«Մովսես Խորենացու դարը» մենագրության մեջ ես ցույց եմ տվել, որ V դ. գոյություն ունեցած «Աշխարհացույց»-ի սկզբնական բնագրում Մեծ Հայքի առաջին և երկրորդ աշխարհները կոչվել են հակոտնյա անուններով՝ «Ա աշխարհ» Բարձր Հայք, այսինքն Կարնոյ քաղաք» և «Բ աշխարհի Հայոց» Ստորին Հայք, որ է Ծոփաց կողմն»³: VII դ. ենթադրյալ կեղծարարը չէր կարող Փարպեցուց օգտված լինել, քանի որ Բյուզանդիայի Հուստինիանոս կայսրը 536 թվի 31-րդ նովեմբրյով Ստորին Հայքը (կամ Ծոփաց աշխարհը) վերանվանեց *Չորրորդ Հայք*, որի հետևանքով մեզ հասած VII դարի «Աշխարհացույց»-ում վերացել է *Ստորին Հայք* հակոտնյա անունը և այլևս չի գիտակցվում Բարձր Հայք և Չորրորդ Հայք անունների միջև նախկինում եղած աշխարհագրական հակադրությունը: Եթե Եղիշեն V դարի կեսերին գործածած չլիներ Ծոփաց աշխարհի նախկին՝ Ստորին Հայք անունը, ապա ոչ միայն Թոմսոնի ենթադրած VII դ. կեղծարար մատենագիրը, այլև ինքը՝ Թոմսոնը և մենք բոլորս որտեղի՞ց պետք է տեղյակ լինեինք միայն Ավարայրի դեպքերին ակնառատես Եղիշեի մոտ պահպանված և հետագայում անհետացած աշխարհագրական անվանը:

Ավարայրի պատմիչ Եղիշեն հանդես է գալիս հիրավի որպես անկանխակալ հեղինակ՝ ակնառատեսի հավաստի վկայություններով: Մինչդեռ նույն դրվագներում Փարպեցին իրերը գնահատում է ժամանակի հեռավորությունից՝ որոշակի գունագարդումով:

¹ Խոր., Գ, ԽԵ, էջ 314:

² Խոր., Գ, ԽԸ, էջ 319:

³ Ա.Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 123:

Եղիշեի Պատմության երկարամյա ուսումնասիրող և եռանդուն ջատագով Երվանդ Տեր-Մինասյանը, որքան էլ ժամանակային առումով ճիշտ է գնահատում Եղիշեի և Ղազար Փարպեցու առնչության խնդիրը, այսուհանդերձ նրանց երկերի պատմական արժեքը գնահատելիս շեղվում է իրողությունից և դրանով իսկ ակամայից սողանք է թողնում Եղիշեի առաջնությունը վիճարկելու համար: Նա գրում է. «Միամտության արդյունք է այս երկու հեղինակների երկերը իբրև *պատմական գրվածքներ* միմյանց հետ համեմատելը և մեկի առավելությունները մյուսի վերաբերյալ ցույց տալը, որովհետև դրանք բոլորովին տարբեր բնույթի և տեսակի երկեր են, որոնց երբեք չի կարելի միևնույն չափանիշով մոտենալ: Ղազար Փարպեցու գրվածքն *իսկական պատմություն* է (ընդգծումը – Ա.Մ.), որի նպատակն է պատմական երևույթների ծագումն ու զարգացումը նկարագրել, իսկ Եղիշեի երկը, պատմական նյութ ունենալով հանդերձ, *մի բանաստեղծություն է՝* լի քնարական սրտաբուխ զեղումներով, որի նպատակն է «սիրելիների համար մխիթարություն, հուսացողների համար հույս և քաջերի համար քաջալերություն լինել»¹՝ նեղ օրերում»²: Ահա և Ե.Տեր-Մինասյանի մատնանշած մի ավելի ցայտուն հակադրություն. «Բայց այն (Եղիշեի երկը – Ա.Մ.) իսկապես ասած մի սովորական պատմություն չէ, այլ վկայաբանական գումավորում ստացած մի պատմական դյուցազներգություն ..., որ գրված է խիստ որոշ նպատակով – «որպեսզի շարունակ կարդաս՝ լսելով առաքինի անձների քաջությունը և հետ կացածների վատթարությունը»³, որի հետ երբեք չի կարող համեմատվել ժամանակ անցնելուց հետո սառնությամբ ամեն մանրամասնություն կշռադատած ու գրված որևէ իսկական պատմական երկ, ինչպիսին այս դեպքում Ղազար Փարպեցու գրվածքն է»⁴:

Բայց ո՞ր հեղինակը գիրք գրելիս նպատակ չի հետապնդում, որ ընթերցողները շարունակ կարդան իր գրածը: Մի՞թե Մովսես Խորենացին էլ իր ծանրակշիռ «Հայոց պատմությունը» չի գրել հենց նրա համար, որ իր հայրենակիցները հաճախակի և անհագուրդ կարդան իրենց ազգի ու հայրենիքի պատմությունը: Տեսե՛ք, թե Պատմահայրն ինչ է գրում՝ Եղիշեին հար և նման. «Այլ որչափ ջան և յիշողութիւնք բաւեցին՝ պատմեցաք

¹ Չակերտներում բերված խոսքերը Եղիշեի Պատմության նախաբանից են. «...յօժարութեամբ ձեռնարկեցաք զայս ինչ, որ է մխիթարութիւն սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց» (Եղիշէ, էջ 4-5):

² Ե.Տեր-Մինասեան, «Եղիշեի «Վարդանանց պատմությունը» և նրա քննադատները» – «Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 127:

³ Հմմտ. Եղիշէ, էջ 4. «...զի հանապազորդ ընթեռնուցոա, լսելով զառաքինեացն զքաջութիւն, և զյետս կացելոցն զվատթարութիւն»:

⁴ Ե.Տեր-Մինասեան, «Եղիշեի «Վարդանանց պատմությունը» և նրա քննադատները», էջ 127:

ստուգապէս... հասարակաց խօսիք անցանելով ընդ պատմութիւնս, որ-պէս զի մի՛ ոք երեւեսցի ի պերճաբանութիւնս գրաւեալ առ փափագն, այլ ճշմարտութեան բանից մերոց կարօտեալ՝ ստէպ ստէպ և անյագ առնի-ցեն զընթերցումն պատմութեանց մերոց հայրենեաց»¹ - «Այլ որքան ջանք ու հիշողութիւն բավականացան, մենք ստուգութեամբ պատմե-ցինք... հասարակ լեզվով այս պատմութիւններն անելով, որպէսզի այն-պէս չերևա, թէ մեկը փափագում է (կարդալ) պերճաբանութիւնից գրավելով, այլ մեր պատմածների ճշմարտութեանը կարօտելով՝ հաճա-խակի և անդադար (անհագուրդ – Ա.Մ.) կարդան մեր հայրենիքի պատ-մութիւնը»²:

Բացի այդ, պատմական նյութի մշտական գաղափարը և ոճը, ջեր-մութիւնն ու սառնութիւնը երբեք չեն կարող վկայել որևէ երկի ուշ կամ շուտ գրված լինելու մասին: Վերամբարձ, պաթետիկ ոճով գրված շատ ներբողյալներ հյուսված են նկարագրվող պատմական դեպքերից շատ դարեր հետո:

Բայց այստեղ իմ հիմնական առարկայութիւնն այլ խնդրի է վերաբե-րում: Միանգամայն սխալ է Եղիշեի Վարդանանց պատմութիւնը գնահա-տել իբրև վկայաբանական գրվածք: Թեև Եղիշե պատմիչն իր հերոսների նահատակութիւնը պատկերում է բանաստեղծական ոգեշունչ տողերով, սակայն հեռու է կրօնական վկայաբանութեան պաթոսից – դյուցազներ-գութիւնը չի կարող կապ ունենալ անդրկողմյան կյանքի, մեռնելու երա-նութեան սկեռում գաղափարի հետ:

Հայ մատենագիր-պատմիչները՝ սկսած մեր պատմագրութեան անդ-րանիկ երկից՝ Ագաթանգեղոսի Պատմութիւնից, միշտ ուսուցանել են աշ-խարհում քաջի անուն թողնելու պատվիրանը. «նոքա են որ չարչարեալք վասն Տեառն իրեանց մեռան, և ի կենդանութիւն փոխեցան, և զանուն և զօգուտ պտղոց իրեանց քաջութեան յաշխարհի թողին»³ - «Նրանք են, որ իրենց Տիրոջ համար չարչարվելով՝ մեռան և ի կենդանութիւն փոխ-վեցին և իրենց անունն ու քաջութեան պտուղների օգուտը աշխարհին թողեցին», - գրում է Ագաթանգեղոսի Պատմութեան հեղինակն Առաջա-բանում և նկատի առնելով քաջութեան անուն թողած հերոսներին՝ ավե-լացնում է. «շինութիւն աշխարհի՝ յԱստուծոյ նոցա բարեխօսութեամբ է շնորհեալ. զի գութ աստուածութեանն ի նոսա իջեալ՝ ողորմութիւն և քա-տութիւն շնորհէ աշխարհի» (Ագաթ.,» 10) - «Նման մարդկանց բարեխո-

¹ Խոր., Գ, Ա, էջ 257-258:

² Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, թարգմանութիւնը, ներածութիւնը և ծանոթագրութիւնները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, Գ, Ա, էջ 239:

³ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կա-նայեանց, Տփղիս, 1909 (այսուհետ՝ Ագաթ.),» 9:

սութամբ է, որ Աստված աշխարհին շենություն է պարգևում, քանզի աստվածային գութը նրանց վրա իջնելով՝ ողորմություն և քավություն է շնորհում աշխարհին»։ Ըստ Ագաթանգեղոսի Պատմության՝ նահատակությունն ինքնանպատակ չէ, այլ աշխարհը՝ հայրենի երկիրը, շեն պահելու խորհուրդ ունի իր մեջ, և այդ շեն աշխարհում էլ հարկ է քաջի և արդար մարդու անուն թողնել։ Ագաթանգեղոսի Պատմությունը, հակառակ իր խորը քրիստոնեական ոգուն, փառաբանում է նույնիսկ հեթանոս արքա սեգ Տրդատի հայրենավեր քաջությունը, և քրիստոնյա հեղինակը հեթանոս արքայի մասին նույնպիսի գովեստով ասում է. «զամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ և առնէր մարտիցն յաղթութիւն։ Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, և զհոյակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր. Զարկանէր ի հարուածս զքշմամիսն, և խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն» (Ագաթ., »123)։ Երկրի վրա արդար անուն թողնելու համար է փառաբանվում նաև քրիստոնեական հավատի ջատագով Կոստանդիանոս կայսրը. «զանուն յերկրի թողոյր և զարդարութիւն յերկինս հաստատէր» (Ագաթ., » 884)։

Վրարի մեր մյուս պատմիչը՝ Փավստոս Բուզանդը, բազմաթիվ հայտնի ու գրեթե անվերծանելի մակդիրներով փառաբանում է Մամիկոնյան ցեղը, որին ըստ նախնյաց կարգի՝ հանձնված էր ստրատելատությունը, սպարապետությունը և զորավարությունը Մեծ Զայքի բովանդակ զորքերի վրա՝ ընդգծելով նրանց ոչ միայն ռազմի հմտությունն ու սխրանքը, այլ ոչ պակաս նաև քաջի անուն, բարի համբավ թողնելու նրանց տոհմիկ առաքինությունը. «...աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանունք, բարենշանս բարեհամբաւք բարեգործք յաջողակք ՚ի գործ պատերազմաց ՚ի բուն ՚ի նախնեացն կարգաց ՚ի Մամիկոնեան ազգին, ՚ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ՚ի վերայ ամենայն զօրավարութեանն բազմութեանն Զայոց մեծաց, հանապազ յամենայն ժամ յաղթող ազգին պարգեւեալ յերկնից բարիանուն իրաքաջ ՚ի մեծի նահապետութեան պատերազմի»¹։ Ուրեմն ըստ Փավստոսի՝ Մամիկոնյան հաղթող տոհմին երկինքն էր պարգևել բարի անուն և քաջություն։ Զայոց աշխարհի սպարապետ և խնամակալ Մանվել Մամիկոնյանը՝ իր մահից առաջ Արտաշիր որդուն հանձնելով տանուտիրական իշխանությունը ու զօրավար-սպարապետությունը, պատվիրում է հնազանդ ու հպատակ լինել Արշակ արքային և Զայոց աշխարհի համար պատերազմում զոհել իր անձը՝ քաջ նախնիների պես. «Անուն քաջութեան յերկրի թողցուք, և զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք. և ամենևին ՚ի մահուանէ մի՛

¹ Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Զայոց. Բնագիրը Բ.Պատկանյանի, Երևան, 1987, դպր. Դ, գլ. Բ, էջ 106:

երկնչիք, այլ յուսասցիք յայն, որ զամենայն արար և հաստատեաց»¹:

Ազաթանգեղոսի Պատմության ավանդած այս պատվիրանն ընդունում և իր հերթին հրահանգում է նաև Եղիշեն, որի վկայությամբ՝ դեռ Ավարայրից առաջ ապստամբների ամենից ավելի կրկնած խոսքն էր. «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս չեք ժառանգեսցուք»²:

Եղիշեի Վարդան սպարապետը՝ իբրև Բուզանդի փառաբանած Մամիկոնյան տոհմի արժանի զավակ, Ավարայրի դաշտում, ճակատամարտի նախօրյակին, նախարարների և զորքի առջև իր արտասանած ճառում հայ զորականին ոգեշնչում է ոչ թե երկնային կյանքի երանությանմբ, այլ հորդորում քաջի անուն թողնել հենց երկրի վրա, որով և անմոռաց կլինեն նաև երկնքում: Եվ իբրև օրինակ՝ Վարդանը վկայակոչում է Հին Կտակարանից Հուդա և Մատաթիա Սակաբեներին. «ո՞րպես մարտուցեալ կռուեցան ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին Անտիոքացոց: Հի թէպէտ և ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութեան եկաց մինչեւ ցայսօր ժամանակի, ո՛չ միայն յերկրի, այլև անմոռաց յերկինս»³:

Մենք չգիտենք, գուցե Վարդանը հայ զորականին ոգեշնչել է հենց Հայկ Նահապետի օրինակով, որի անունը՝ իբրև հսկայի, Մովսես խորենացուց առաջ հիշատակում է V դարի սկզբին գրված Ազաթանգեղոսի Պատմությունը՝ հայկաբար գործածելով հսկայազոր իմաստով. «արդ՝ առեալ սկայազօրն [Տրդատ] հայկաբար զւոթ արծաճսն՝ ի վերայ իրոց թիկանցն զայն դնէր և ըստանձնեալ բերէր ի վկայարանս տաճարացն»⁴:

Վերադառնալով Եղիշեի և Փարպեցու պատմական երկերի վկայաբանական բնույթին, ես միանգամայն անհիմն եմ համարում Ե.Տեր-Մինասյանի, Գր.Տեր-Պողոսյանի, Բ.Կյուլեսերյանի, ինչպես և մերօրյա որոշ քննադատների պնդումները՝ Եղիշեի երկը կրոնական գունազարդումով վկայաբանություն որակելու վերաբերյալ: Հակառակ այդ տեսակետին, Եղիշեի ոգեշունչ Մատյանում, չնայած պատմիչի բանաստեղծական հուզառատ ոճին ու ոգուն, Վարդան Մամիկոնյանի կերպարը կերտված է իբրև իրական կենդանի զորավարի: Իր պաշտելի սպարապետին նա ոչ մի անգամ սուրբ կամ երանելի չի անվանում՝ հակառակ Ղազար Փարպեցու, այլ վերաբերվում է նրան իբրև կատարյալ աշխարհիկ անձի և կենդանի գործող մարդու՝ բնորոշելով նրան միայն զորավարին վայել մակդիրներով՝ մեծ, առաքինի, արի, քաջ, կորովի, ինչպես հետևյալ օրինակներում. «իբրեւ ետես մեծն Վարդան», «զայս ամենայն առաքինի

¹ Փատտոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց, Ե, գլ. ԽԴ, էջ 390:

² Եղիշէ, էջ 68:

³ Եղիշէ, էջ 105:

⁴ Ազաթ., « 767:

զօրավարն խօսեցաւ», «իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ», «ի վեր հայեցաւ քաջն Վարդան», «իսկ կորովին Վարդան իրովք քաջ նիգա-կակցօքն», «յազգէն Մամիկոնէից քաջն Վարդան»¹:

Նույն պատկերը նկատուի ենք և Ավարայրում նահատակված նախա-րարների դեպքում: Եղիշեն այստեղ, զոհված ինը նախարարներին թվարկելիս, նրանցից յուրաքանչյուրին զատ-զատ մեծարում է ռազմի կո-րովը կամ բնավորությունը հատկանշող ուրույն մակդիրներով՝ Քաջն Վար-դան, Խորէնն Կորովի, Արին Արտակ, Զարմանային Տաճատ, Իմաստունն Զմայեակ, Զրաշակերտն Ներսեհ, Մանուկն Վահան, Արդարն Արսէն, Յա-ռաջադէմն Գարեգին²: Մինչդեռ Փարպեցին, Եղիշեից քաղելով նահա-տակված ինը նախարարների նույն ցուցակը, բացի սուրբ Վարդանից, մնացյալ նախարարներին միանման երանելի է անվանում՝ Եղիշեի բազ-մապիսի մակդիրների փոխարեն – սուրբն Վարդան, երանելին Խորէն, ե-րանելի սեպուին Արտակ, երանելին Տաճատ, երանելին Զմայեակ, երա-նելին Ներսեհ, երանելին Վահան, երանելին Արսէն, երանելին Գարեգին³: Այստեղից էլ հետևում է, որ Ավարայրում զոհված ինը նախարարներից միայն սպարապետ Վարդան Մամիկոնյանն է սուրբ հռչակված եղել:

Նույնիսկ Ավարայրի ծակատամարտում հերոսաբար նահատակվե-լուց հետո էլ Եղիշեն Վարդանին սուրբ կամ երանելի չի կոչում: Մի ան-գամ միայն, ընդհանուր ձևով, ծակատամարտում զոհված հայ նախա-րարների ու ռազմիկների մասին գրում է. «Վասն այնորիկ և ոչ կարէին, կալ ժմարտիւ ի վերայ սուրբ մարմնոց երանելեացն»⁴: Վարդանը սուրբ կամ երանելի չի կոչված մինչև իսկ այն ժամանակ, երբ Ապար աշխար-հի հավատափոխ պարսիկ մոգպետը գիշերային սքանչելի տեսիլքում Զայոց նահատակների գնդի մեջ ծանաչում է Վարդան Մամիկոնյանին, Արտակ Պալունուն և Խորեն Խորխոռունուն, որոնք երկնքից իրենց ձեռ-քին ինը պսակ էին բերում՝ դեռևս չնահատակված սուրբ Ղևոնդյանց և հավատափոխ մոգպետի համար⁵:

Եղիշեի Վարդանանց պատմության մեջ, ըստ ամենայնի, զգացվում են բանաստեղծ-պատմիչի պաթոսն ու հայրենասերի կիրքը, մինչդեռ Փարպեցուն կարդալիս ընթերցողին շարունակ ծնշում է վկայաբանին բնորոշ նահատակության ընդգծված պաթոսը: Զակառակ Եղիշեի հան-դեպ ունեցած իր անհամդուրժող կեցվածքի, արգենտինահայ պատմա-բան Զրանտ Արմենն ինքն է հաստատում, թե ի տարբերություն Եղիշեի՝ Փարպեցին որքան մոր հոգևոր մակդիրներ է փակցնում Վարդան Մա-

¹ Եղիշէ, էջ 99-120:

² Եղիշէ, էջ 119-120:

³ Փարպ., Բ, գլ. ԼԹ, էջ 72:

⁴ Եղիշէ, էջ 118:

⁵ Եղիշէ, էջ 150-151:

միկոնյանին՝ «սուրբ Վարդան», «երանելի սպարապետ Վարդան», «երանելի սուրբ նահատակ» և այլն և այլն: Եվ դա հենց այն նույն դրվագներում, որտեղ Եղիշեն նրան պարզապես զորավար է ներկայացնում: Ասենք նաև, որ Փարպեցու գրքում դեռևս կենդանի, գործող, զենքը ձեռքին մարտնչող Վարդան սպարապետը հենց սկզբից ներկայացվում է իբրև երանելի նահատակ՝ սրբի լուսապսակը ծակատին: Տպավորությունն այնպիսին է, թե հայ իշխանների, զորականների ու ժողովրդի հետ խոսում ու շփվում է ոչ թե կենդանի անձը, այլ սուրբ Վարդան նահատակը:

Այս տեսակետից չափազանց ուշագրավ է Փարպեցու Պատմության մեջ Վարդան Մամիկոնյանի և նրա երկու եղբայրների հենց առաջին հիշատակումը, որտեղ Սահակ Պարթևի փեսա սպարապետ Յամազասպ Մամիկոնյանից ծնված երեք որդիներին Փարպեցին արդեն իսկ սուրբ և երանելի է անվանում. «Եւ վասն զի ոչ գոյր իւր (Սահակայ հայրապետի) արու որդի, բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Յամազասպայ տեառն Մամիկոնէից և Յայոց սպարապետի, որ ծնաւ ի Յամազասպայ երիս արու որդիս, զսուրբն Վարդան և զսուրբն Յմայեակ և զերանելին Յամազասպեան»¹: Կնշանակի, այս գրելու պահին՝ V դ. վերջին, Վարդան և Յմայակ Մամիկոնյանները Յայ Եկեղեցու կողմից արդեն սրբերի կարգն էին դասվել, իսկ նրանց երրորդ՝ կրտսեր եղբայրը վախճանված պետք է լիներ. Երանելի մակդիրը Փարպեցին գործածում է բացառապես վախճանված կամ զոհված անձանց վերաբերյալ:

Եղիշեի հերոսը՝ հոգևորական թե ռազմիկ, պատրաստվում է նահատակվել և իրոք էլ նահատակվում է հավասարապես Յայ Եկեղեցու և հայրենի երկրի ազատության համար: Եկեղեցին և երկիրը Եղիշեի համար միասնական են, ինչպես հոգին ու մարմինը, և թշնամին հենց այդ միասնությունն է ցանկանում պառակտել՝ Յայոց աշխարհում զրադաշտականություն տարածելու, ժողովրդին բռնի հավատափոխ անելու իր դիվային ծրագրով, որին դիմագրավում են Յայաստանում թե՛ հոգևորականը և թե՛ աշխարհականը: Եղիշեն մեծ հմտությամբ ցույց է տալիս, թե ինչպես Յովսեփ կաթողիկոսը և նրա հետ եղած սուրբ Ղևոնդյանը, Մուշկան Նյուսալավուրտի և Վասակ Սյունու ձեռքը գերի ընկնելուց հետո, գրավոր բողոք են հղում Պարսից արքունիք՝ ոչ թե իրենց անձերի փրկության, այլ Յայոց աշխարհը շեն պահելու համար. «Քանզի ոչ եթէ ակնկալութիւն ինչ էր երանելեացն ըստ մարմնաւոր կենացս, այլ իմաստութեամբ հնարս խնդրէին լինել փոխանակ ամենայն աշխարհին շինութեան»²: Իսկ նույն ամրոցում եղած երկու հարյուր տասներեք աշխարհականները նահատակվում են հանուն շեն եկեղեցիների, անքակ տաճարների և սուրբ եկեղեցու միաբանության:

¹ Փարպ., որ. Ա, ԺԸ, էջ 37:

² Եղիշէ, էջ 123:

Հոգևորականների ու աշխարհականների այս փոխադարձ ինքնագոհաբերումը, որ նույն դրվագում խորաթափանց կերպով ցուցադրում է եղիշեն, բացահայտում է եկեղեցու և հայրենիքի, հոգու և մարմնի փոխադարձ, անքակտելի կապը՝ հոգևորականը մարտնչում էր երկրի, իսկ աշխարհականը՝ եկեղեցու համար: Եղիշեն փառաբանում է նահատակությունը՝ ոչ իբրև սոսկ ինքնագոհաբերում, այլ որպես սխրանք, հերոսություն հանուն Հայոց եկեղեցու և հայրենի երկրի՝ առավելապես ի ցույց դնելով բառիս բազմակի նշանակությունը և հատկապես այս վերջին՝ «քաջագործություն» իմաստը. «...քանզի բազմադիմի է նահատակութեանդ անուն, և նա բազմադիմի շնորհս բաշխէ ամենեցուն»¹ և քաջերին քաջալերելու համար նա վկայակոչում է հաղթության զորագլուխ Քրիստոսին իր անպարտելի զորությամբ. «...զգօրագլուխն յաղթութեան, որ և ոչ ումեք ոտնհար լիցի թշնամութեամբ, այլ ամենեցուն ուսուցանէ զիր անպարտելի զօրութիւնն»²: Եվ ինչպես վկայում է ականատես պատմիչը՝ հենց այսպիսի հերոսությամբ հերոսացավ և Հայոց աշխարհը. «Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց»³:

Դրան հակառակ, Ղազար Փարպեցին քարոզում է նահատակություն՝ բառիս զուտ «մահապարտություն» իմաստով, այն աշխարհում երանության հասնելու համար:

Ձմռան ցրտաշունչ օրերն անցնելուց հետո, - պատմում է Փարպեցին, - մեծ Ջատկի տոնը՝ Կենարարի հարությունը, խաղաղությամբ և ուրախությամբ տոնելուց սակավ օրեր անց լսեցին, թե անհամար Պարսից զորք է եկել Յեր և Ջարևանդ գավառը, և Հայոց երանելի սպարապետ Մամիկոնեից տեր Վարդանը կոչ ուղարկեց ուխտապահներին, որոնք տոն օրերի առթիվ գնացել էին իրենց տները՝ Ջատկի տոնն իրենց ընտանիքների հետ կատարելու⁴, թե «բազում գունդ է եկել, հասել՝ աստվածասերներին բերելով երկնավոր պսակներ. արդ ով ցանկանում է ստանալ՝ ածապարեցե՛ք, որ ոչ ոք չզրկվի ու չզոջա: Իսկ եթե մեկը այլ կերպ է խորհում, ինչպես ուրիշները, որ խոտորվեցին սատանայի ետևից՝ թող հանգիստ պառկած մնա, որտեղ հաճելի թվա իրեն: Քանզի ոչ ոք պսակ չի ընդունի իր ընկերների հետ, թե չտանջվի, այլ յուրաքանչ-

¹ Եղիշէ, էջ 5:

² Եղիշէ, էջ 5:

³ Եղիշէ, էջ 99:

⁴ Բ. Ուրաբայանը այս հատվածը աշխարհաբար թարգմանել է որպես սպարապետի ուղիղ խոսք՝ հրամայական եղանակով. «...որոնք տոնի օրերի պատճառով իրենց տներն էին գնացել, թե՛ զատկի տոնը կատարեցեք ձեր ընտանիքների հետ» - Ղազար Փարպեցի, Հայոց Պատմութիւն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, գլ. ԼԷ, էջ 161:

յուր ոք ինքն է վաստակում իր անձի համար հողեղենն ու հավիտենականը»¹ - «Եւ երանելի սպարապետն Յայոց տէրն Մամիկոնէից Վարդան ազդ առնէր ուխտապահացն, որք յաղագս տօնի աւուրցն երթեալք էին ի տունս իրեանց՝ կատարել գտօնն զատկի առ ընտանիս իրեանց, եթէ «Գունդ բազում հասեալ գայ, բերելով աստուածասիրացն պսակս երկնաւորս. արդ՝ որ ոք ցանկայ առնուլ՝ ածապարեցէք, զի մի՛ վրիպեսցի ոք և զղջանայցէ: Եւ եթէ ոք խորհի այլազգ ինչ, որպէս և այլքն, որք խոտորեցան զկնի սատանայի՝ դադարեալ հանգիցէ՝ ուր և թուեսցի հաճոյ ումեք: Քանզի ոչ ոք պսակի ընդ ընկերաց իւրոց՝ թէ ոչ տանջի. այլ իւրաքանչիւր ոք անձին իւրում գանձէ զհողեղէնսս և զյաւիտենականսն»²:

Ավելին, ըստ Փարպեցուն՝ երանելի սպարապետ Վարդան Մամիկոնյանը Առանձար սեպուհին ուղարկում է ոչ միայն լրտեսելու Պարսից զորքի թվաքանակը, այլև այն նպատակով, որ «եթե հնար լինի՝ գրգռեն նրանց, որ շուտափույթ գան և բերեն մեզ արքայության պսակները, որ նրանց ձեռքով պարգևում է մեզ Փրկիչ Քրիստոս՝ հավիտենական բարութեանց տվողը» - «առաքել երանելի սպարապետն Յայոց Վարդան, միաբանութեամբ աւագանւոյն որ ընդ նմայն էին, սեպուհ մի յազգէն Ամատունեաց, որում անուն էր Առանձար, իբրև երեք հարիւր հեծելով՝ երթալ, լրտեսել զբազմութիւն զօրացն Պարսից, և տալ գրգիռս, եթէ հնար իցէ, առ ի փութապէս, ասէ, զալ, բերել մեզ զպսակս արքայութեան, զոր ի ձեռն նոցա պարգևէ մեզ Փրկիչն Քրիստոս, յաւիտենից բարութեանցն տուիչ»³:

Իսկ թե ինչու է Փարպեցին Եղիշեից քաղած սույն դրվագից ջնջել Ամատունյաց Առանձար սեպուհին տրված «լի իմաստութեամբ և քաջութեամբ» բնորոշումը⁴, միանգամայն պարզ կդառնա, եթե հիշենք, որ Առանձարը Վահան Ամատունի հազարապետի տոհմակիցն էր, որին Ղազարը ներկայացնում է բացասական, ուղղակի վարկաբեկիչ մակդիրներով՝ իբրև քսու և բանասարկու, որոգայթ լարողի: Ուստի և Պարսից վերջապահ գնդի դեմ Առանձարի տարած հաղթանակը Ղազարը վերագրում է ոչ թե նրա իմաստությանը և քաջությանը, այլ Աստծո զորությանը, որ նրանց պարգևեց Փրկիչ Քրիստոս⁵: Այնուհետև Առանձարից և նրա հետ եղողներից լսելով, թե Պարսից զորագլուխներ Մուշկան Նյուսալավուրտը և Դողվձը, անարգել առաջ խաղալով, շուտով կարող են հասնել երկրի միջնաշխարհը, «Յայոց երանելի սպարապետն ու նրա հետ եղողները շտապեցին երթալ նրանց դեմ, նախ՝ ավելի շուտ հանդիպելու մարտի-

¹ Թարգմ. Ա.Մ., հմմտ. «... այլ յուրաքանչյուր ոք իր անձի համար է հավաքում հողեղեններն ու հավիտենականը» (թարգմ. Բ. Ուլուքաբյանի, դրվագ Բ., գլ. ԼԷ, էջ 161)

² Փարպ., դր. Բ, գլ. ԼԷ, էջ 68:

³ Փարպ., դր. Բ, գլ. ԼԸ, էջ 69:

⁴ Եղիշէ, էջ 105:

⁵ Փարպ., դր. Բ, գլ. ԼԷ, էջ 69:

րոսության ժամին, քանզի գիշեր ու ցերեկ, միշտ ու անձանձրույթ աղոթում էին, որ արժանի լինեն մի այդպիսի երկնավոր վիճակի. և երկրորդ, ասում էին՝ թերևս այնտեղ, հենց Յեր ու Զարևանդ գավառում էլ վճռենք պատերազմի ելքը» - «Հոր լուեալ երանելոյ սպարապետին Յայոց և որ ընդ նմայն էին՝ ևս առաւել ծեպէին երթալ ընդդէմ նոցա. նախ՝ վասն վաղվադակի պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան. քանզի անձանձրոյթ աղօթէին հանապազ ի տուէ և ի գիշերի, լինել արժանի այնպիսի մասին երկնաւորի. և երկրորդ՝ ասէին, թերևս անդէն ի տեղուջն ի Յեր և ի Զարևանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին...»¹:

Եվ այստեղ Փարպեցին ներկայացնում է մի տարօրինակ դիպված, որի հետքն անգամ չկա և չէր էլ կարող լինել Եղիշեի Պատմության մեջ. «Պենդեկոստեի մեծ տոնի ուրբաթ օրը Յայոց զորքը եկավ, հասավ այն նույն տեղերը (որտեղ Առանձարն էր եղել - Ա.Մ.) և շատ անպատրաստ գտավ Պարսից զորքը. եթե կամենային, երամակարծակ այն ծուլերին կարող էին մեծապես վնաս հասցնել, սակայն հետաձգելով՝ հանգստացան այդ օրը, քանզի նահատակություն փափագողները մտքում չէին դրել հաղթել [միայն նրա համար], որ ամեն օր տեսնեն հոգին կորցրածների ապականումը, այլ միշտ և հանապազ շտապում էին հասնել կոչման կետին ու տենչալի մարտիրոսությանը» (թարգմանությունը՝ Ա.Մ.):

Պատմաբան և բանասեր Ա.Մ. Գարագաշյանը իր «Քննական պատմություն Յայոց» շատ արժեքավոր աշխատության մեջ մշտապես նախամեծար է համարում Փարպեցու պատմությունը, իսկ Եղիշեի Վարդանանց պատմությունը չի ընդունում իբրև պատմական աղբյուր: Ժիշտ է, Առանձարի մասին վերը բերված դրվագում նրան զարմացնում է երամով խելակորույս նահատակության ձգտելու փարպեցիական մոլեռանդությունը՝ «Արդարև զարմանք. մարտիրոսութեան հասնելու, այսինքն յաղթուելու և մեռնելու նպատակաւ՝ պատերազմ յարուցանել, և կամաւ կորուսանել թշնամին ընկճելու պատեհութիւնը նոյն նպատակին համար»², և սակայն զլանում է հիշատակել Եղիշեի պատմած նույն դրվագը, երբ Վարդան սպարապետի հանձնարարությամբ հետախուզության ուղարկված Առանձար սեպուհն իր ջոկատով ջախջախում է պարսկական զորքի վերջապահ գունդը և անկորուստ վերադառնալով՝ զեկուցում սպարապետին իր հաղթանակի և թշնամու մտադրությունների մասին:

Նույն ոգով է պատկերում Ղազար Փարպեցին նաև 482-485 թթ. ապստամբության մասնակիցների նահատակությունը: Կուր գետի մոտ մղված ծակատամարտում Վահան Սամիկոնյանի եղբոր՝ Վասակի դեմքին հանկարծ լույս է ծառագում, որից էլ նրա կողքին կռվողները հասկանում են, որ նա նահատակվելու է. «Նրանք, որ այնօր ընդունելու էին

¹ Փարպ., դր. Բ, գլ. ԼԷ, էջ 69:

² Ա.Մ. Գարագաշեան, մասն Դ, գլուխ Բ, էջ 140

նահատակության պսակը, Վերին զորությունը նրանց ցույց տվեց, և նրանք մտքի աչքերով, նահատակությունից առաջ, հայտնապես տեսան իրենց դեմքերի անծածուկ ահագնափոխությունը. բնական մահկանացու տեսքից փոխվեցին, ընդունեցին վերին զորությունների՝ հրեշտակների կերպարանքը: Մանավանդ, Հայոց զորավար Վահանի եղբոր՝ քաջարի Վասակ Մամիկոնյանի դեմքը, որ փառավորվեց Աստծո լուսապսակով, և սրբի շատ ընկեր-նիզակակիցներ, նայելով նրա փայլակնացայտ դեմքին, որ նման էր մեծ մարգարե Սովսեսի փառավորված դեմքին, չէին հագեցնում դիտելուց: Եվ նրա մեծ եղբայրը՝ Հայոց զորավար Վահանն էլ տեսավ այդ ուսաստիկ զարհուրած՝ անմիջապես հասկացավ, որ սա իրենից ու այս զագրելի կյանքից հեռացել, գնում է հրեշտակների բանակը, և հենց այսպիսին է այն բանակի զորականների տեսքն ու կերպարանքը»¹:

Եղիշեի պատկերած տեսիլներում նահատակության պսակները Քրիստոս ուղարկում է հրեշտակների կամ սուրբ նահատակների ձեռքով, իսկ Փարպեցու Պատմության մի քանի դրվագներում, ինչպես տեսանք, Հայոց ազգի մարտիրոսության պսակները Քրիստոս ուղարկում է թշնամիների՝ Պարսից զորքի ձեռքով: Հայ զորականը, ըստ Փարպեցու, գերադասում է նահատակվել, այլ ոչ թե հաղթել թշնամուն, և դա նրա համար, որ այլևս չտեսնի հոգեկորույսների՝ հոգին կորցրածների ապակա-նությունը կամ այս զագրելի կյանքից ազատվելու համար:

Այս արտառոց մտայնությունը, որ ցավալիորեն տեղ է գտել Փարպեցու շատ արժեքավոր պատմական մատյանում և թելադրված է անձնական կյանքում նրա ապրած խոր հիասթափությամբ, խիստ վիճելի և անընդունելի է նույնիսկ IV-V դարերի կրոնադավանաբանական ընկալումների տեսակետից և տրամագծորեն հակառակ է Փարպեցու գրքից ավելի քան մեկ ու կես դար առաջ՝ 330-ական թթ. Հայ եկեղեցու առաջին հիմնասյուներից մեկի՝ Վրթանես Մեծ քահանայապետի ավանդած պատգամին՝ «Եթե թշնամիները մեր աշխարհը գրավեն՝ այստեղ կհաստատեն իրենց անօրեն, անհավատ, անասոված կարգերը, որ, հուսանք, թե երբեք լինելու չէ: Իսկ մեր բարեպաշտ նահատակները այս բանի համար պատերազմ մղեցին, և չարիքը մեր աշխարհից հալածելով ու հեռացնելով մեռան, որպեսզի անհավատությունը այս աստվածապաշտ և աստվածասեր աշխարհը մուտք չգործե և չարի կամքին ծառա չդարձնե...»² - «Եւ եթէ զաշխարհս ունիցին արդեւ թշնամիքն, և զիրեանց զանօրէն զանկրօն զանաստուած կրօնիցն զօրէնս աստ արդեւ հաստատէին, որ, զոր խնդրեմքս, քա՛ւ և մի լիցի: Իսկ մեր բարեպաշտութեան նահատակք 'ի վերայ այսորիկ ձգնեալ պատերազմաւ, զչար պա-

¹ Փարպ., դր. 9, 37, էջ 134:

² Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, դպր.3, գլ. ԺԱ, էջ 45:

հեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ՝ մեռան, զի մի յայսպիսի աստուածապաշտ և աստուածասէր աշխարհ անօրէնութիւն մտեալ չարի կամացն 'ի ծառայութիւն արկցէ...»¹: Այսպէս է սփոփում և ոգեշնչում Մեծ Վրթանեսը Պարսից զորքի դէմ հայերի մղած պատերազմում Մեծ Յայքի սպարապետ և զորավար Վաչէ Մամիկոնյանի զոհվելու առթիվ:

Եվ Մեծ Վրթանեսը օրենք սահմանեց Քրիստոսի համար նահատակված սրբերի կարգը դասելու հենց երկրի փրկության համար պատերազմում ընկածներին՝ կանոն դնելով՝ ոչ թէ ողբալ միայն նրանց մահը, այլ որ նրանց անունները հիշվեն Աստծո սեղանի առաջ, պատարագի ժամանակ՝ սրբերի անունները հիշատակելուց հետո, իսկ ընկածների հարազատներին հոգ և խնամք տանեն. «Որք այն ամենայնի փոխանակ զանձինս իրեանց ոչ խնայեցին, ընդ վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ: Արդ մի՛ լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ժշմարտութեան, առ նահատակն դիցուք ընդ աշխարհի օրէնս յափտեանս յափտեցից զի ամենայն ոք զնոցա յիշատակ քաջութեան իբրև Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ: ...Եւ եղ օրէնս ընդ աշխարհի մեծ քահանայապետն Վրթանէս, զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. և որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին 'ի նմանութիւն նոցա, եղ կանոն՝ յիշել զնոսա առ սուրբ սեղանն աստուծոյ 'ի ժամ պատարագին. յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն, և ապա զկնի նոցա զնոցայն. և մնացելոցն յանցելոցն գութ և խնամ կալցին»²:

Մեր պատմիչներից Փարպեցին միակն է, որ հանվանե հիշատակում է Փալստոս Բուզանդին և նրա «Պատմութիւն Յայոց»-ը, ուստի չէր կարող գոնե այստեղից, եթէ ոչ Եկեղեցական կանոնադրությունից, ծանոթ չլինել Վրթանէս քահանայապետի այս պատգամին: Եվ ինքը՝ Փարպեցին էլ 482-485 թվերի հաղթական ապստամբության նկարագրությամբ մեծապես պանծացրել է Վահան Մամիկոնյանի, Սահակ Բագրատունի մարզպանի և մյուս հերոսների քաջությունն ու անվեհերությունը, որ վերջի վերջո արժանապես զնահատում է նաև Պարսից թագավորը՝ ապստամբության ղեկավարին և զորավարին ծանաչելով Յայոց մարզպան:

Եղիշեն աներկբա ցույց է տալիս, որ ազգադավ գործչի արժանի դատապարտողը հենց այն թշնամին է, որին նա ստորաբար ծառայում է - երբ Պարսից թագավոր Յազկերտը Միհրներսէի հազարապետից տեղեկացավ, թէ Վարդան Մամիկոնյանի զորքի ավելի քան վաթսուն հազար թվաքանակի և այլ ռազմական կարևոր տվյալների մասին հաղորդողը Յայոց մարզպան Վասակ Սյունին է, դառնացավ իր հոգում և երդվեց. «Եթէ ապրեսցի անօրէնս այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք

¹ Փալստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Յայոց, դպր.3, գլ. ԺԱ, էջ 44:

² Փալստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Յայոց, դպր. 3, գլ. ԺԱ, էջ 46:

տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու»¹: Այս իմաստով չափազանց նշանակալից է նաև Փարպեցու հաղորդածը՝ Ատրպատականի Յերզավառի Նվարսակ գյուղում, Պարսից արքայից արքա Վաղարշի ներկայացուցիչ Նիխորի մատուցած ընթրիքի ժամանակ, բանակցության եկած ապստամբ հայերը արժանացան պատվավոր ընդունելության, իսկ Պարսից կողմն անցած ուրացող նախարարները արհամարհվեցին իբրև անպիտաններ, - այս է թշնամուն ծառայելու վարձը. «Եւ զնախարարսն որ եկեալ էին ի Մամիկոնեանն Վահանայ՝ սիրով ընկալեալ Նիխորայ և պատուեալ՝ արձակէր ընդ պատգամաւորս իւր առ Մամիկոնեանն Վահան. Մեծաւ պատուիրելով յանձնէր նոցա՝ վաղվաղակի և անյապաղ ածել զՄամիկոնեանն Վահան. և հրաժարեալ զնոսա Նիխորոյ՝ արձակէր սիրով: Եւ տեսեալ զայն աստուածուրաց խաբէբայիցն, որք ի միաբանութեան Պարսկացն էին, թէ ո՛րպէս յապստամբացն եկեալ Յայք ի Նիխորոյ պատուեալք և մեծարեցան ի Պարսկացն, և ինքեանք արհամարհեալք են իբրև զանպիտանս՝ դարձեալք լի ամօթով յերկիր կործանէին»²:

Եվ վերջապես, որքան էլ մտովի փոխադրվենք V դար և ջանանք տոգորվել ժամանակի կրոնա-բարոյական ոգով, դարձյալ անհնար է համակերպվել ազգային հերոսին Ղազար Փարպեցու վերագրած կրոնական մոլեռանդությանը՝ ժամ առաջ նահատակվելու անկասելի բաղձանքին, միայն թե իր հոգին հավիտենական լույսի մեջ լինի և ընդունի անմահության լուսապսակ, իսկ թե ինչ կլինի իր նահատակվելուց հետո ամեհի թշնամու ձեռքը մատնված հայ ժողովրդի ձակատագիրը, հայրենասեր զորավարի փույթը չէ: Իհարկե, չպետք է միամիտ լինել այն աստիճան կարծելու համար, թե իրականում Յայոց սպարապետը գիշեր ու ցերեկ քնել-արթնացել է հենց միայն նահատակվելու փափագով: Դա ոչ այնքան պատմիչի, որքան վկայաբան-վարքագրի տեսլականն է: Եվ այս իմաստով Փարպեցին զգալիորեն առանձնանում է այն հեղինակների մեջ, որոնց ջանքերով մեզանում ստեղծվեց, Մ.Աբեղյանի դիպուկ արտահայտությամբ, կրոնական մաքառման գրականությունը: Մեր ժամանակներում ևս հերոսները զոհվում են ոչ թե ժողովրդի ու հայրենիքի, այլ կուսակցության ու առաջնորդի համար:

Ազգովի նահատակվելու փարպեցիական պաթոսը, երբ ազգը պատկերանում է նրան իբրև հովիվների ետևից աղի վրա վազող ոչխարների հոտ՝ «որպէս հօտք, որ ի ձայն աղի փութայցեն զկնի հովուացն»³, որ նահատակություն է տեսնում ոչ թե հայրենի երկրի ու ժողովրդի ազատության, այլ սեփական անձի երանության պսակի և այս զագրելի կյանքից փրկվելու համար, վկայում է, թե որքան էր սխալվում Եղիշեի քննադատ

¹ Եղիշէ, էջ 97:

² Փարպ., որ. Գ, Ղ, էջ 163:

³ Փարպ., որ. Բ, Լէ, էջ 68:

Գր.Տեր-Պողոսյանը, երբ 1895/96 թվերին հրատարակած հոդվածաշարում եզրակացնում էր. «Ղազար Փարպեցին ավելի լայն հայացք, բուն քաղաքական տեսակետ ունեցող և ավելի արժանահավատ պատմիչ է, քան թե Եղիշեն, որը միակողմանի է և խնդրին կրոնական մեկնություն է տալիս»¹: Զարմանալին այն է, սակայն, որ այս թյուր կարծիքին համամիտ է նաև Ե.Տեր-Մինասյանը, որը շուրջ կես դար հետո Գր.Տեր-Պողոսյանի եզրակացության առթիվ գրում է. «Այս հարցում (որ, հակառակ Փարպեցու, Եղիշեն միակողմանի է և խնդրին կրոնական մեկնություն է տալիս - Ա.Մ.) բանասերների մեջ ընդհանուր համաձայնություն է տիրում և վիճելու առիթ չկա»²:

Եղիշեի Վարդան Մամիկոնյանը՝ իբրև սպարապետ և զորական, աշխարհական անձ է՝ իր կոչումով, ըմբռնումներով, ռազմի հմտությամբ, և չի կարող ներկայացվել հոգևորական սքեմի տակ, ինչպես անում է Զրանտ Արմենը: Նրա այն պնդումը, թե Սահակ կաթողիկոսը, արու գավակ չունենալով, իր թու Վարդանին մանկությունից պատրաստել էր հոգևոր սպասավորության՝ Լուսավորչի տան ժառանգական իշխանությունը պահպանելու և շարունակելու համար, չի դիմանում քննադատության. «Վարդան պատահաբար չէ, որ բացառիկ կրօնական զգացումով տոգորուած մէկը եղաւ, առաւել քան իր աշխարհական գործակիցները: Սահակ կաթողիկոս մեծ խնամքով կրօնական կրթութիւն ջանքեց անոր, այն յոյսով, թէ օր մը իրեն կը յաջորդէ որպէս հայրապետ, և այդպիսով Լուսաւորչի ընտանիքէն չի վերնար կաթողիկոսութիւնը»³:

Երկու պատմիչների ստեղծած Վարդանի կերպարը, անշուշտ, ենթարկվել է կրոնական որոշակի գունազարդման, բայց մեր ժամանակակից պատմաբանն ավելի է խտացնում գույները: Վարդանի կերպարն իր բուն աշխարհիկ էությամբ ընկալելու համար՝ մեզ օգնության է գալիս մի երրորդ անգնահատելի աղբյուր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որին ցավոք, այս առնչությամբ չեն անդրադարձել ո՛չ Զր.Արմենը և ո՛չ էլ այլ հեղինակներ:

Սահակ Պարթևը չէր կարող Վարդանին դաստիարակել իբրև կրոնավոր, առավել ևս Լուսավորչի տան ժառանգորդ՝ այն պարզ պատճառով, որ նա տոհմիկ սպարապետների՝ Մամիկոնյանների տան զավակ էր, և ինքն էլ՝ սպարապետի որդի, ուստիև տոհմային իրավունք և պարտավորություն ուներ ստանձնելու Հայոց ընդհանուր զորքի զորավարությունը:

¹ Գր. Տեր-Պողոսեան, Եղիշի Պատմութեան աղբիւրը, Զանդէս ամսօրեայ, Վիեննա, 1895, էջ 20-23, 58-61, 110-113, նույնի՝ Նկատողութիւններ Եղիշի Պատմութեան վերաբերեալ, Զանդէս ամսօրեայ, Վիեննա, 1896, էջ 129, 168, 197 և 302:

² Ե.Տեր-Մինասեան, «Եղիշեի «Վարդանանց պատմությունը» և նրա քննադատները», էջ 130:

³ Զրանդ Բ.Արմէն, Հայկական Գերագոյն Ատեան՝ Վասակ Սիւնի (ամբաստանեալ), Պէյրութ, 1969, էջ 28:

Վարդանը Համազասպ սպարապետի (Սահակ կաթողիկոսի դստեր ամուսնու) որդին էր, ընդ որում սպարապետության պատիվը Համազասպին շնորհվել էր Պարսից Արտաշիր թագավորից՝ հենց Սահակ կաթողիկոսի խնդրանքով, ինչպես վկայում է պատմահայր Մովսես Խորենացին¹: Իբրև սպարապետի որդի և այդ տիտղոսի ապագա ժառանգորդ՝ Վարդանը դեռ երիտասարդ հասակից ուներ զինվորական աստիճան և իբրև զինվորական էլ ուղեկցում էր Մեսրոպ Մաշտոցին Արևմտյան Հայաստանով Կ.Պոլիս մեկնելիս, որտեղ և Թեոդոս Փոքր կայսրից ստացավ ստրատելատի (զորագլխի) տիտղոս²: Այնուհետև, մոտ 422 թվին Սմբատ ասպետի հետ Վարդան ստրատելատը Տիգրոնում մասնակցեց Վռամշապուհի որդի Արտաշեսին Հայաստանի վրա թագավոր նշանակելու բանակցություններին³: Իսկ 432/3 թ., Սահակ Պարթևին Տիգրոնի քառամյա արգելանքից արձակելու ժամանակ, Պարսից թագավոր Վռամ Երկրորդը Վարդան ստրատելատին հաստատեց Մամիկոնյան տոհմի տանուտեր⁴: Խորենացու մատնանշած բոլոր այս դրվագներում Վարդան Մամիկոնյանը հանդես է գալիս որպես պետական և ռազմական գործիչ:

Եվ վերջապես Հր. Արմենի այն թեզը, թե Սահակ կաթողիկոսն իր թոռ Վարդանին «մեծ խնամքով կրոնական կրթություն ջամբեց»՝ իրենից հետո հայրապետ կարգելու հույսով, հիմնովին հերքվում է հենց Մովսես Խորենացու վկայությամբ: Ասորի անարգ և ատելի եպիսկոպոսապետ Շամուելի մահից հետո, երբ բոլոր հայ նախարարները «գնացին մեծն Սահակի մոտ, իրենց մեղքերը հանձն առնելով՝ աղաչեցին, որ նորից դառնա իր աթոռը... ամենքը միասին մուրհակ կնքեցին, որ նույն իշխանությունը նրա թոռներին կտան ժառանգաբար: Բայց նա հանձն չէր առնում: Նրանց շատ թախանձանքներից հարկադրված՝ պատմեց այն տեսիլքը, որով քնի մեջ շատ ժամանակներ առաջ երևացին նրան ապագայում լինելիքները»⁵: Այս տեսիլքը, որ երևացել է Սահակ Պարթևին Վաղարշապատ քաղաքի սուրբ եկեղեցում, դեռևս եպիսկոպոս ձեռնադրվելուց առաջ⁶ (նախքան 390 թ.)՝ Ղազար Փարպեցին մեկնությամբ հանդերձ գետեղել է իր Հայոց պատմության մեջ⁷: Ուրեմն, Սահակ Պարթևը դեռ երիտասարդ հասակում աստվածային տեսիլքից գիտեր, որ իր տոհմի՝ Լուսավորչի տան կաթողիկոսությունը դադարելու է աստ-

¹ Խոր., Գ, ԾԱ, էջ 322-324:

² «Թուղթ Թեոդոսի առ Սահակ» - Խոր., Գ, ԾԷ, էջ 335:

³ Խոր., Գ, ԿԵ, էջ 352:

⁴ Խոր., Գ, ԾԸ, էջ 337:

⁵ Խոր., Գ, ԿԶ, էջ 354 (թարգմ. Ա.Մ.):

⁶ Փարպ., դր. Ա, ԺԶ, էջ 28:

⁷ Փարպ., դր.Ա, ԺԷ, էջ 28-37:

վածային տեսչությամբ, էլ ինչպե՞ս կարող էր նա դրանից հետո Վարդան թոռանը մանկությունից հատուկ հոգևոր կրթության տալ՝ նրան կաթողիկոս դարձնելու համար, հակառակ աստվածային տեսչության. «Նախարարներն այս լսելով և հասկանալով, որ աստվածային հրամանով նրա ազգատոհմի քահանայապետությունը դադարեց, արտասվելով վայ տվին իրենց»¹:

Այս ամենը քաջ հայտնի պետք է լիներ Զր.Արմենին, բայց նա հավատավորի եռանդով սկսեցվել է միայն իր մտացածին գաղափարին: Եվ ցավալիորեն խոսքը վերաբերում է մի հայագետի, որն այլ դեպքերում զարմացնում է գիտական իր անսպասելի մեկնաբանումներով և պատմական կնճռոտ հարցերի լուսաբանությամբ:

Ցավոք, 451 թվին քաղաքագետ-մարզպանը և զորավար-սպարապետը հանդես էին գալիս երկու, միմյանց ներհակ դերակատարների մեջ: Քաղաքագետ-կառավարչի և զորավարի մի փայլուն օրինակ է մատնացույց անում Լեոն՝ հանձին Սմբատ Խոստովանողի որդի, իշխանապետ Աշոտ Բագրատունու, որն իր մեջ միավորելով այդ երկու հատկանիշները՝ մեր պատմության շրջադարձին ծնունդ տվեց Բագրատունյաց թագավորության:

«887 թվականին Յայաստանում տեղի ունեցավ պատմական մեծ դեպք: Սոթամեդ-Բիլլահը (Բաղդադի խալիֆը – Ա.Մ.) թագ ու արքայական գավազան էր ուղարկել Աշոտին: Գևորգ կաթողիկոսը մեծ հանդեսով օծեց նրան: Ծիրակի թագավորությունը իրողություն դարձավ:

«Զորս հարյուր հիսուն տարի էր անցել այն ժամանակից, երբ նույն այս Արարատյան նահանգի մի ուրիշ գավառում մարեց Արշակունյաց թագավորությունը: Զորս հարյուր հիսուն տարվա մեջ Յայաստանը շատ չար ու բարի տեսավ, հերոսներ եկան գնացին, հայրենիքի բախտը ապահովելու համար. շատ ազնիվ ձգտումներ եղան, շատ արյուն թափվեց, անհամար զոհեր գնացին: Բայց առեղծվածը մնաց անլուծելի, ոչ ոք չկարողացավ որոշել երկրի ժակատագիրը, ոչ ոք ուժ չունեցավ հաղթահարելու անողորմ հանգամանքները. զուր անցան անձնագոհությունը, հերոսական ջանքերը: Եվ ոչ ոք չկարողացավ անել այն, ինչ արավ Աշոտ Բագրատունին քաղաքագետի, կառավարչի և զորավարի փայլուն տաղանդով»²:

Բանալի բառեր. մատենագիտություն, պատմիչ, սկզբնաղբյուր, փաստ, տեքստ, համեմատություն

¹ Խոր., Գ, ԿԶ, էջ 354 (թարգմ. Ա.Մ.):

² Լեո, Անի՝ տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, Երևան, 1963, էջ 306:

Мушегян Алберт

**История Вардананц с противоположными
интерпретациями от Егише и Парпеци**

Резюме

Между филологами и историками, начиная с конца XIX века, ведется острый диспут, какой из двух исторических трудов Егише и Лазаря Парпеци является первоисточником Истории Варданитов. В настоящей публикации преследуется цель, на основе новых фактов подтвердить, что Лазарь Парпеци в своей Истории Армении выступает только в роли пересказчика или оппонента первоисточника Егише.

Ключевые слова - написание рукописей, историк, источник, факт, текст, сравнение

Myshegyan Albert

**The History of the Vardanants with couter-interpretation
by English and Parpetsi**

Summary

More than a century is continuing the pro and con dispute among the philologists and historians, which is the primary source of History of Vardanits from two Old-Armenian historians - Elishe and Lazar P'arpec'i. This research aims through the new facts affirm, that Lazar appears in his "Armenian History" as a narrator or opponent of Elishe.

Key words - writing of manuscripts, historian, source, fact, text, comparison